ՍԱՂՄՈՍ 91

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
ՏԻՐՈՋԸ վստահողների ապահովությունը MT չկա	Աստծո ներկայու-թյան մեջ բնակվելու ապահովությունը	Խորհրդածություն Աստծո մասին որպես հավատարիմների պաշտպան	Աստված մեր պահապանը	Աստծո պաշտպա-նության երգը
91:1-4	91:1-2	91:1-6	91:1-6	91:1-2
	91:3-6			91:3-4
91:5-10				91:5-6
	91:7-8	91:7-8	91:7-8	91:7-9
	91:9-10	91:9-10	91:9-13	
				91:10-11
91:11-13	91:11-13	91:11-13		
				91:12-13
91:14-16	91:14-16	91:14-16	91:14-16	91:14-16

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Ներածություն

1. Սա հրաշալի Սաղմոս է, որը նկարագրում է Աստծո պաշտպանությունը և Իր ներկայությունը Իր հավատարիմ հետևորդների հետ (տես՝ Սաղմոս 16, 23, 62, 121):
2. Հաճախ Սաղմոսները խոսում են Իսրայել ազգի մասին (տես՝ Սաղմոս 90), սակայն այս մեկը անհատականացված է (ԵԶԱԿԻ թիվ «դու»):

3. Սաղմոս 91:1-8-ի ճշմարտությունը զուգահեռված է Սաղմ. 91:9-13-ով: Աստծո հոգածությունը և մատակարարումը կրկնվում են շեշտադրության համար և ապա Աստված Ինքը խոսում է Սաղմ. 91:14-16:

Բ. Սաղմոս 91-ում կիրառված անունները Աստծո համար՝

1. Բարձրյալ (*Էլոհիմ,* BDB 751, KB 832), Սաղմ. 91:1ա – բնութագրող տիտղոս, որը շատ հաճախ կիրառվում է պոեզիայում
2. Ամենակարող (*Շադայ,* BDB 994), Սաղմ. 91:1բ, 9բ, կիրառվում է հիմնականում Ծննդոցում և Հոբում, միայն երկու անգամ Սաղմոսներում՝ 68:4-ում և այստեղ – Աստծո համար օգտագործվող նահապետական անունը (տես՝ Ելից 6:30):
3. ՏԵՐ (ՅԱՀՎԵ, BDB 217), Սաղմ. 91:2ա, 9ա – Աստծո ուխտի անունը, առաջին անգամ կիրառվում է Ծնն. 2:4-ում. բխում է եբրայերեն «լինել» (տես՝ Ելից. 3:14) ԲԱՅԻՑ, ռաբբիներն ասում են, որ այն նկարագրում է Աստծուն որպես Փրկիչ և Ազատարար:
4. Աստված (*Էլոահ,* BDB 43, KB 52), Սաղմ. 91:2բ – սա Աստծո համար գործածվող ընդհանուր անուն է ՀՄԱ-ում՝ *Էլ.* Ծնն. 1:1-ում կիրառվում է ՀՈԳՆԱԿԻ ձևը՝ *Էլոհիմ:* Ռաբբիներն ասում են, որ սա նկարագրում է Աստծուն որպես երկրի վրա ամբողջ կենդանության արարիչ, պահապան և մատակարար:

   <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ</u>, Բ, Գ, Դ

   <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. *ՇԱԴԱՅ*</u>

Գ. Այս Սաղմոսում գերակշռում են ԱՆԿԱՏԱՐՆԵՐԸ (28), որոնք ցույց են տալիս մեր Աստծո կողմից հավատարիմ հետևորդների համար շարունակական գործողություններ: Սաղմ. 91:14-ի երկու ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐԸ ցույց են տալիս հաստատուն, մտերմիկ փոխհարաբերություն Աստծո և Իր հավատարիմ հետևորդների միջև:

Նկարագրությունը ամուսնական կյանքից է (տես՝ Եսայի 54:5, Ովսեա 2:19, Եփես. 5:25):

1. «հարել»՝ տես Ծնն. 2:24
2. «գիտենալ»՝ Ծնն. 4:1,17, 25, 24:16, 38:26

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 91:1-4
[1]Բարձրյալի գաղտնի տեղում ապրողը
Ամենակարողի ստվերի տակ է հանգչելու:
[2]ՏԻՐՈՋ մասին ասելու եմ. «Իմ ապավենն ու ամրոցն է,
Իմ Աստվածը, Ում վրա է հույսս»:
[3]Հիրավի Նա քեզ փրկելու է որսորդի որոգայթից,
Վտանգավոր ժանտամահից:
[4]Քեզ ծածկելու է Իր փետուրներով,
Ու Նրա թևերի տակ ես ապաստանելու:
Նրա ճշմարտությունը վահան է ու ասպար:

91:1-4 Այս պարբերությունը կիրառում է մի քանի անուն՝ տիտղոս Աստծո համար (տես Համատեքստային Հասկացություններ, Բ) և մի քանի տեսարաններ, որոնք բնութագրում են Նրա հոգատարությունը և պաշտպանությունը:

1. գաղտնի տեղ՝ ծածկոց – Սաղմ. 27:5, 31:20, որը մատնանշում է տաճարը, տես՝ Սաղմ. 27:5, 31:20, 32:7, 61:4
2. ստվեր – տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՏՎԵՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ</u>
3. ապաստան – տես՝ Սաղմ. 5:11-ի առցանց գրառումը, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՊԱՍՏԱՆ</u>

4. ամրոց – Սաղմ. 18:2, 31:3, 71:3, 144:2, Երեմ. 16:19

Սաղմոս 91:4 ակնարկում է վերոնշյալ #2, 3, 4:

Այն Մեկը, որին վստահում են հավատարիմ հետևորդները (BDB 105, KB 120, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 4:5-ի առցանց գրառումը):

1. ազատում է նրանց որսորդի որոգայթից (տես՝ Սաղմ. 124:7)
2. փրկում է նրանց մահացու ժանտախտից (տես՝ Սաղմ. 91:6, հավանաբար դիվական, տես՝ Ամբ. 3:5 և <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԻՎԱԿԱՆԸ ՀԿ-ՈՒՄ</u>)
3. կծածկի նրանց Իր թևերով (տես՝ Սաղմ. 36:7, 57:1, 63:7, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՏՎԵՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ</u>)
4. Նրա հավատարմությունը (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼԸ, ՎՍՏԱՀԵԼԸ, ՀԱՎԱՏՔԸ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ՈՒՄ</u>)՝
   ա. վահան է (տես՝ Սաղմ. 35:2)
   բ. ասպար է կամ (RSV) պատվար (երկուսն էլ ռազմական տերմիններ են, այս բառը (BDB 695, KB 750) կարելի է գտնել ՀԿ-ում միայն այստեղ. NIDOTTE, հատոր 3, էջ՝ 243):

Սա գեղեցիկ և հզոր պարբերություն է Իր ժողովրդի համար ՅԱՀՎԵԻ բնավորության և գործերի մասին:

91:1 «Ամենակարողի ստվերը» Սա կարող է վերաբերել՝

1. ուխտի տապանակի վրա *քերովբեների* թևերին (այինքն՝ ուխտի պաշտպանությունը, տես՝ Ելից 25:17-22)
2. պաշտպանող մայր թռչնի թևերը (տես՝ Սաղմ. 17:8, 36:7, 57:1, 61:4, 63:7, 91:4, և Մատթ. 23:27)
3. արևի այրող ջերմությունից պաշտպանվելու նկարագրություն (տես՝ Սաղմ. 121:5, Եսայի 25:4, 32:2):

91:2 «որին վստահում եմ» Աստծո հետ ուխտի փոխհարաբերության առանցքը սա է (տես՝ Սաղմ. 4:5, 25:2, 56:4): «Վստահելը» (BDB 105, KB 120, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, շատ անգամ է կիրառվում Սաղմոսներում) մարդկության կողմից կենդանի Աստծուն տրված պատշաճ պատասխանն է: ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ գտնվում է Սաղմ. 37:3,5, 52:8, 62:8, Եսայի 26:4-ում: Այս բառի հետ առնչվող հոմանիշի համար տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼԸ, ՎՍՏԱՀԵԼԸ, ՀԱՎԱՏՔԸ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ՈՒՄ</u>:

91:3 «ժանտամահ» Հիմնական արմատը דבר (BDB 182-184), որն ունի մի քանի գործածություն՝

1. աշխարհ (տես՝ Սաղմ. 91:5-ի LXX, UBS Տեքստային Նախագիծը՝ էջ 361, գնահատում է “B”, «կործանման աշխարհ»)
2. խոսք՝ խոսել (տես՝ Երեմ. 5:13)
3. ժանտամահ (տես՝ Ելից 5:3, 9:15, Թվոց 14:12, Ղևտ. 26:25, 2 Օր. 28:21, Սաղմ. 78:50)
4. արոտ (տես՝ Միքիա 2:12)
5. մեղու կամ խայթոց (NIDOTTE, հատոր 1, էջ՝ 916)

Շնարհիվ Սաղմ. 91:5-6-ի #3 լավագույնս է համապատասխանում համատեքստի և զուգահեռակա-նության հետ:

91:4q ՅԱՀՎԵԻ բնավորությունը չարի դեմ հավատարիմ հետևորդների պաշտպանությունն է այս ընկած՝ մեղավոր աշխարհում:

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ (ՀԿ)</u>

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ</u>

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 91:5-10

5Չես վախենալու գիշերվա զարհուրանքից
Ու ցերեկը թռչող նետից,
6Ո՛չ մթության մեջ շրջող ժանտամահից,
Ո՛չ էլ կեսօրվա պահին եկող ավերածությունից:
7Հազար հոգի քո կողքից ու տասը հազար քո աջ կողմից են ընկնելու,
Բայց դա քեզ չի մոտենալու:
8Միայն քո աչքերով նայելու ու տեսնելու ես
Ամբարիշտների հատուցումը:
9Քանի որ դու ՏԻՐՈՋԸ՝ իմ Ապավենին,
Բարձրյալին քեզ ապաստարան դարձրիր,
10Քեզ չարիք չի հասնելու ու ոչ մի հարված
Չի մոտենալու քո հարկին:

91:5-10 Այս պարբերությունը շարունակում է Սաղմ. 91:1-4-ի նկարագրությունը:

1. Սաղմ. 91:3բ-ի «վտանգավոր ժանտամահը», որը ընդլայնվում է Սաղմ. 91:5-6, 10
2. Սաղմ. 91:4գ-ի ռազմական նկարագրությունը ընդլայնվում է Սաղմ. 91:7-8-ում

91:5-6 Այս բաները դիտարկվում էին ռաբբիների կողմից որպես դիվականի տարրեր (տես՝ *Հուդիկա Հանրագիտարան*, հատոր 5, էջ՝ 1523): Ուշադրություն դարձրե՛ք՝

1. շրջող, Սաղմ. 91:6
2. ընկնելու
3. Սաղմ. 91:7-ի «դա»-ն

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԻՎԱԿԱՆԸ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ</u>

91:7 Սա չափազանցություն հանդիսացող արտահայտություն է, որը կիրառում է հավատացյալի ուխտի Աստծո կողմից նրա անձնական հոգածության ռազմական նկարագրություն:

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՋԱՐ (*eleph*)</u>

91:8 Ինչպես որ Աստծո ժողովուրդը ենթարկվում է ամբարիշտների հարձակմանը, այնպես էլ լինելու են նրանց դատաստանի ականատեսը (տես՝ Սաղմ. 37:34, 54:7, 58:10): Այս նույն թեմային զեղեցիկ անդրադարձ է կատարում Սաղմոս 73-ը:

❖ **«հատուցում»** Հիմնական արմատի (BDB 1024) այս ձևը (ԻԳԱԿԱՆ սեռ ԵՋԱԿԻ թիվ) ՀԿ-ում կարելի է գտնել միայն այստեղ: ԱՐԱԿԱՆ սեռի ձևերը գտնվում են 2 Օրինաց 32:35, Եսայի 59:18-ում (երկու անգամ):

91:9-10 Այս համարը եբրայերենում կարծես թե առաջին հերթին դիմում է Աստծուն (այսինքն՝ Ո՛վ ՅԱՀՎԵ) առաջին տողում և ապա հայտարարություն է կատարում այն հավատարիմ հետևորդների համար, որոնք Նրան դարձրել են իրենց ծածկոցը՝ բնակատեղին (կամ «ամրոցը», NEB): Մի քանի տեղեր կան, որտեղ ի հայտ են գալիս անձանց նմանօրինակ խառնուրդ: UBS *Ձեռնարկը* (էջ՝ 801) դա առաջարկում է՝

1. Սաղմոս 91:1-ում՝ մի քահանա է խոսում
2. Սաղմոս 91:2-ում՝ երկրպագուն
3. Սաղմոս 91:3-8-ում՝ կրկին քահանան
4. Սաղմոս 91:9ա-ում՝ երկրպագուն
5. Սաղմոս 91:9բ-ում՝ կրկին քահանան
6. Սաղմոս 91:14-16-ում՝ Աստված է խոսում

Սա լուծում է անձի մի քանի խնդիրներ, սակայն բարձրացնում է քերականական այլ հարցեր: Եբրայերեն լեզուն հաճախ է առանց որևէ ակնհայտ պատճառի փոխում անձանց, անգամ սեռերը:

91:10 Սա հավատարիմ հետևորդի տան և ընտանիքի ապահովության և անվտանգության խոստում է:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 91:11-13
[11]Քանի որ Իր հրեշտակներին պատվիրել է,
Որ քո բոլոր ճանապարհներում քեզ պահպանեն:
[12]Նրանք քեզ ձեռքերի վրա են վերցնելու,
Որ չլինի, թե ոտքդ քարի խփես:
[13]Առյուծի ու իժի վրայով ես քայլելու,
Առյուծի կորյունին ու վիշապին ոտնակոխ ես անելու:

91:11-12 Այս համարները մեջբերվում են Սատանայի կողմից՝ անապատում Հիսուսի փորձության ժամանակ (տես՝ Մատթ.4:6, Ղուկ.4:10-11): Աստծո հոգատարության խոստմունքը պետք է տեքստային ապացույց ունենա կանխաենթադրյալ պահանջի մեջ: Հավատացյալները չարչարվում են (տես՝ Հոբ, Սաղմոս 73 ի դեմս 2 Օրինաց 27-28, Հռոմ.8:28-30 ի դեմս 8:31-39):

91:11 «Նրա հրեշտակները» Սա կարող է լինել ՀԿ-յան հիմք (տես՝ Ելից 23:20) Մատթ.18:10, Ղուկաս 4:10-11 (LXX) և Գործք 12:15-ի՝ «պահապան հրեշտակների» հասկացության համար: Նաև ուշադրություն դարձրեք, եթե համադրեք Եբր.1:14-ը Սաղմ.103:21-ի հետ, կարծես թե կապ կստեղծվի:

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿՆԵՐ</u>

❖ **«քո բոլոր ճանապարհներում քեզ պահպանեն»** Սա հրաշալի խոստում է բոլոր այն մարդկանց, ովքեր վստահում են Աստծուն և դիմում են Նրա հոգածությանը: Այդուհանդերձ, սա նույնպես աստվածաշնչյան չափազանցություն է: Մենք ապրում ենք մի ընկած՝ մեղավոր, չար աշխարհում: Հավատացյալները նեղություններ, հիվանդություններ, փորձություններ կրում են (տես՝ Մատթ. 5:10-12, Հովհ.15:18-21, 16:1-3, 17:14, Գործք 14:22, Հռոմ.5:3-4, 8:17, 2 Կորնթ.4:16-18, 6:3-10, 11:23-30, Փիլ.1:29, 1 Թեսաղ.3:3, 2 Տիմ.3:12, Հակոբոս 1:2-4, 1 Պետ.3:14, 4:12-16, Հայտն.11:7, 13:7):

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՉԱՐՉԱՐԱՆՔ</u>

9:13 Սա կապում է նախորդ խոստումները պատմականորեն Իսրայելի անապատում դեգերելու շրջանի հետ կամ հնարավոր է լինի փոխաբերական խոսք այն խնդիրների համար, որոնց մարդը առերեսվում է այս մեղավոր՝ ընկած աշխարհում (տես՝ Սաղմ.58:3-5, Ղուկաս 10:19):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 91:14-16
[14]Որովհետև իր սերն Ինձ վրա է դրել,
Դրա համար էլ փրկելու եմ նրան.
Բարձր տեղ եմ դնելու նրան,
Քանի որ ճանաչեց Իմ անունը:
[15]Կանչելու է Ինձ, ու Ես նրան պատասխան եմ տալու,
Նեղության մեջ նրա հետ եմ լինելու,
Ազատելու եմ ու պատվելու եմ նրան,
[16]Կշտացնելու եմ նրան երկար օրերով
Ու Իմ փրկությունն եմ ցույց տալու նրան:

91:14-16 Աստված խոսում է և հետևաբար դնում է «եթե ... ապա» ուխտի օրինության փոխհարաբերություն (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30):

Աստված (ապա) Հավատացյալ (եթե) Աստծո օրհնությունները

1. սեր է տալիս (բառացի՝ «հարիր»), Աստված (ԿԱՏԱՐՅԱԼ) նրա հետ է լինում նեղության ժամանակ
2. բարձր տեղում է դնում, ճանաչում է Աստծո անունը (ԿԱՏԱՐՅԱԼ), փրկում է նրան
3. պատասխանում է նրան, կանչում է Աստծուն (ԿԱՏԱՐՅԱԼ), պատվում է նրան (տես՝ Հովհաննես 12:26):
   ա. երկար կյանքով
   բ. տեսնում է Աստծո փրկությունը

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿԱՆՉԵԼ ՆՐԱ ԱՆՈՒՆԸ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ»

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿՈՒԹՅՈՒՆ (ՀԿ)

91:14 «ճանաչել» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՃԱՆԱՉԵԼ

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Բացատրե՛ք թաքստոց, ստվեր, ապաստարան, ամրոց սուրբգրային նկարագրությունները:
2. Թվարկե՛ք և սահմանե՛ք Աստծո անունները:
3. Արդյո՞ք Սաղմ.91:5-7 խոսում է դիվականի, պատերազմի, թե հիվանդության մասին:
4. Ինչո՞ւ է Սաղմ.91:9-10 կրկնում Սաղմ.91:1-2-ի մտքերը:
5. Ինչպե՞ս է չարը Հիսուսի հետ խոսելիս ոչ տեղին օգտագործել այս Սաղմոսը:
6. Արդյո՞ք յուրաքանչյուր հավատարիմ հետևորդ ունի «պահապան հրեշտակ»:
7. Արդյո՞ք այս Սաղմոսը խոստանում է, որ հավատացյալները խնդիրներ չեն ունենա:
8. Կապված Սաղմոս 91:14-15-ի հետ բացատրե՛ք «անուն» հասկացությունը: